ՏԵՂԵԿԱՆՔ

«Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխվող հոդվածների մասին

«Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը

***Հոդված 5.* Պետական պահպանության օբյեկտները**

1. Պետական պահպանության օբյեկտների շարքին դասվում են սույն օրենքով սահմանված բարձրաստիճան պաշտոնատար անձինք, այն անձինք, որոնց սույն օրենքի համաձայն տրամադրվել է պետական պահպանություն, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և կառավարությունների ղեկավարներն ու այլ անձինք՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ժամանակ:

2. Պետական պահպանություն տրամադրվում է՝

1) Հանրապետության նախագահին.

2) վարչապետին.

3) Ազգային ժողովի նախագահին.

3.1) Ամենայն Հայոց Կաթողիկոսին.

4) սույն օրենքի 6.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում՝ վարչապետի թեկնածուին:

Հանրապետության նախագահը, վարչապետը և Ազգային ժողովի նախագահը՝ իրենց պաշտոնավարման ժամանակահատվածում, իսկ վարչապետի թեկնածուն՝ մինչև վարչապետ նշանակելու հարցի լուծումը, իրավասու չեն հրաժարվելու պետական պահպանությունից:

3. Այլ պետական պաշտոնյաներին, հասարակական, քաղաքական, կրոնական և այլ գործիչներին, ինչպես նաև այլ անձանց կարող է պետական պահպանություն տրամադրվել վարչապետի որոշմամբ: Այդ անձանց պահպանությունը կարող է իրականացվել վարչապետի սահմանած իրավասու պետական մարմնի կողմից:

3.1. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչապետի որոշումը ենթակա չէ հրապարակման:

4. Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց կողմից (բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց) վարչական զանցանք կամ հանցագործություն (հակաօրինական արարք) կատարվելու դեպքում պետական պահպանություն իրականացնող խմբի ղեկավարը պարտավոր է՝

1) հատուկ պետական պաշտպանության ենթակա անձին անհապաղ տեղեկացնել, որ պետականպահպանությունը կարող է կասեցվել այդ անձի կողմից հակաօրինական արարք կատարվելու ընթացքում.

2) անհապաղ զեկուցել պետական պահպանության ծառայության (այսուհետ՝ ծառայություն) ղեկավարին հետագա պահպանությունը իրականացնելու նպատակահարմարության վերաբերյալ:

Սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված կարգով իրազեկվելուց հետո հատուկ պետականպահպանության ենթակա անձի կողմից հակաօրինական

արարքը շարունակվելու դեպքում պետականպահպանություն իրականացնող խմբի ղեկավարի որոշմամբ այդ արարքի կատարման ընթացքում կարող է կասեցվել պետական պահպանությունը: Նույն կարգով իրազեկվելուց հետո վարչական զանցանք կամ հանցագործություն կրկին կատարվելու դեպքում ծառայության ղեկավարի որոշմամբ հատուկ պետականպահպանությունը դադարեցվում է:

5. Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձինք, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց, կարող են ժամանակավորապես հրաժարվել պետական պահպանությունից՝ այդ մասին գրավոր իրազեկելով ծառայության ղեկավարին:

(5-րդ հոդվածը լրաց. 20.03.08 ՀՕ-3-Ն, խմբ., փոփ., լրաց. 23.03.18 ՀՕ-275-Ն)

Հոդված 25. Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության իրավահաջորդությունը

Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայությունը ~~Հայաստանի Հանրապետության Նախագահի~~ Հանրապետության նախագահի և բարձրաստիճան պաշտոնատար այլ անձանց անվտանգության ապահովման վարչության իրավահաջորդն է: